

# Սիպիլ

## Օրօրումներ

Կը մարի լույսն ամպերուն տակ երերուն.
Ա՛լ կը պարզե կըանքի երազն իր շոգին,
Խորհուրդներու մեջ փաթթելով մեր հոգին,
Դեղնած մարած նայվածքին տակ լույսերուն:

Ա՛լ կը պարզե կյանքի երազն իր շոգին.
Մեր միտքն անդուլ կը թափառի միշտ հեռուն
Դեղնած, անփույթ վաղվան պետքին ու հոգին:
Մեր միտքն անդուլ կը թափառի միշտ հեռուն

Կապված ծաղկին, երգին, շողին ու սյուգին,
Անհոգ, անփույթ վաղվան պետքին ու հոգին:

Կապված ծաղկին, երգին, շողին ու սյուգին,
«Վարդը փուշ է, կ՛ըսենք, ձմեռն ալ՝ գարուն»:
Ու կը դիմոնք դեպի անդունդը կյանքին: